ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, քարտուղարություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/69 «21» 01 2020 թ.

Ձեր

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00482736)
տնօրեն Ա. Երիջանյանին
ք. Երևան, Նորք 1-ին նրբ., տ. 5
էլ. հասցե՝ infinityspy1999@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը անբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 21.08.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/7/Բ/4/ԿՇԾ-81» ծածկագրով տնտեսական ապրանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ Պտուտակ 5x50, Մուրճ, Կվալդ, Լամինատի խնամքի հեղուկ, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37 40-15

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2019թ-ի դեկտեմբերի 30-ին ամբողջությամբ միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 21.08.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/7/Բ/4/ԿՇԾ-81» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից իսկ «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 500005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել՝ Պայմանագրի 6.2-րդ կետով հաշվարկված գումարը՝ 9577,4 ՀՀ դրամ:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 35817,5 ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

հրամանատարի պարտականությունների
ժամանակավոր կատարող
փոխգնդապետ ***Գ. Դալլաքյան***

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37-40-15